24849

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք.

ՊՐՈԼԵՏՈՒՍԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ IV-ՐԴ

ԿՈՆՖԵՐԱՆՍԻ

ԲԱՆԱՁԵՎԵՐԸ

(ՀԱՄԽ-ի Պրոլետաուսկենտրյուրոյի նամակը)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԽ-Ի

ՅԵՐԵՎԱՆ – 1928

331.88(47.925)
Հ-24

Հ-29 01 JUN 2013

ԲՈԼՈՐ ՈՒՍԳՈՐԾԲՅՈՒՐՈՆԵՐԻՆ ՅԵՎ ՈՒՍԱՐԺ. ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ

(Նամակ ՀԱՄԽ-ի պրոլետուսկենտբյուրոյի)

Հարգելի ընկերնե՛ր

Ուղարկելով Ձեզ Պրոլետուսի Հայաստանյան 4-րդ կոնֆերանսի վորոշումները՝ Կենտբյուրոն անհրաժեշտ ե գտնում կանգ առնել այն խնդիրների վրա, վորոնք առանձին ուշադրության են արժանացել կոնֆերանսի կողմից, վորոնց կենսագործումը Ձեր գործունեյության առանցքը պետք ե կազմի։

Սույն վորոշումների լայն մասսայականացումը ուսկազմակերպությունների հիմնական և առաջնակարգ խնդիրն ե լինելու. անհրաժեշտ ե մանրամասն քննության առնել կոնֆերանսի բոլոր բանաձևերը թե ընդհանրապես և թե աշխատանքների առանձին բնագավառների (կուլտկրթական, ակադեմիական, տնտեսական, կազմակերպչական և այլն) նկատմամբ. վորոշումներից կարևորագույնները, կամ նրանց համառոտությունը հարկավոր ե հրապարակել պատի թերթերի մեջ. (կարելի յե պատի թերթերում բանալ «կոնֆերանսի վորոշումների կենսագործումը» անունով բաժին)։ Յերբեք չպետք ե մոռանալ, վոր կոնֆերանսի վորոշումներին վոչ թե պետք ե ծանոթանալ, այլ այդպիսիներն անհրաժեշտ ե ուսումնասիրել և կենսագործել։

Մեր առաջ կանգնած կուլտուրական հեղափոխության գործում զգալի դեր ունի կատարելու պրոլետուսանողությունը, վորպես աշխատավորության կուլտուրական

16886

Գրառեպվար 743 գ.. Տիրաժ 150
Պետհրատի 2-րդ տպարան, [illegible]—438

ZUUՌ-Арм ССР им. А. Мясник[illegible]
38140-62

մասը, նա պետք է իր ամբողջ յեռանդն ու կարողությունը ի սպաս դնի այդ գործին և ամեն կերպ աշխատի բարձրացնել աշխատավորության լայն զանգվածների կուլտուրական մակարդակը, քանի որ արհմարմիններն իրենց միջոցներով հնարավորություն չունեն լրիվ կերպով բավարարելու բանվորության անհրաժեշտ չափով աճող կուլտուրական պահանջը։ Արհմարմինների և արտադրական հիմնարկների հետ սերտ կապ ու գործակցությունը — ահա պրոլետարիատի կարևոր խնդիրներից մեկը։

Քաղաքի աշխատավորության հետ մեկտեղ՝ չպետք է աչքաթող անել մեր աշխատավոր գյուղացիության պահանջը. անհրաժեշտ է նրան ևս սպասարկել Շեֆընկերության և այլ միջոցներով։

Կուլտուր-հասարակական աշխատանքներին զուգընթաց ուսարմինները և ամբողջ պրոլետարիատը պետք է զբաղվեն ուսանողության լայն զանգվածների կուլտուրականության և ակադեմ վերակի բարձրացման խնդրով. վերջինիս կատարման նպատակով անհրաժեշտ է հատկապես զարկ տալ գիտական խմբակներին, գիտական-հետազոտական աշխատանքներին և այլն։

Մեր խոշոր նվաճումներից մեկն այն է, որ զգալիորեն աճել է ուսանողության մեջ տարվող արհեստակցական աշխատանքը. ուսանողության խոշոր տոկոսն արդեն ընդգրկված է արհմիությունների կողմից։ Հետագայում անհրաժեշտ է էլ ավելի ուժեղացնել այդ աշխատանքները, ճշտորեն կատարել միութենական և միջմիութենական մարմինների որոշումները, շարունակել ընդունելությունները՝ յենելով ՀԱՄԿԽ-ի որոշումներից՝ և արհեստակցականորեն դաստիարակել ինչպես միության անդամ, այնպես էլ միություններից դուրս գտնվող ուսանողությունը։ Արհդեմոկրատական ուսարհմարմինների առ-

տրյա գործունեության մեջ պետք է կիրառվի անշեղորեն։

Շնորհիվ խորհրդային սիստեմի և հասարակայնության՝ մենք ամենալայն կերպով զարգացրել ենք մեր հասարակական-մասսայական աշխատանքները, որոնք, սակայն, ընկած են փոքրաթիվ ուսանողների վրա և մասամբ նրան հետ են պահում ակադեմիկ և այլ ապարեզներից։ Անհրաժեշտ է առաջ քաշել լայն ուսակտիվ, թեթևացնել ծանրաբեռնված ընկերներին (հետևելով, որ շաբաթական 6 ժամից ավելի վոչ վոք չծանրաբեռնվի հասարակական աշխատանքներով), որոշ չափով կրճատել զանազան նիստերի և ժողովների գումարումը՝ խտացնելով և ռացիոնալացման յենթարկելով այդպիսիների բովանդակությունը։ Նոր ուսակտիվի առաջ քաշում թե ընթացիկ և թե յեկող տարվա համար — ահա ուսկազմակերպությունների առաջ դրված մի կարևոր խնդիր ևս։

Ի վերջո ավելորդ չենք գտնում հիշեցնել, որ անհրաժեշտ է նպատակահարմար ձևով պայքարել ու նախապայքարել ուսանողության կենցաղային մասնակի խեղաթյուրումների դեմ, որոնք առաջ են գալիս այն դժվար պայմաններից, որոնց մեջ աշխատում և սովորում է պրոլետարիատը (որինակ՝ բնակարանային և տրանսպորտական վոչ կատարյալ բարվոք դրությունը, ակադեմիական, հասարակական աշխատանքների ծանրությունը, միաժամանակ աշխատել և սովորելը և այլն)։

ՀԱՄԽ-ի կազմբաժվար՝ Վ. ԱՅՎԱԶՅԱՆ
Պրոլետուսկենաբյուրոյի նախագահ՝ Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Պրոլետուսկենաբյուրոյի քարտուղար՝ Գ. ՍԵՎԱԿ

Հաստատված ՀԱՄԽ-ի նախագահության 1928 թ. Մարտի 8-ի նիստում. Արձանագր. № 6

ԲԱՆԱՁԵՎ

Ընդունված Պրոլետուսի Հայաստանյաց 4-րդ կոնֆերենցիայի կողմից ՀԱՄԽ-ի զեկուցման առթիվ

Լսելով ընկ. Հ. Պետրոսյանի զեկուցումը Հայաստանի Արհմիությունների 5-րդ համագումարի արդյունքների մասին՝ Պրոլետուսի Հայաստանի 4-րդ կոնֆերանսը միանգամայն հավանություն է տալիս համագումարի բոլոր վորոշումներին, հրավիրում է բոլոր ուսարհմարմիններին կենսագործել այդպիսիները և անհրաժեշտ է գտնում նրանց մասսայականացումը ուսանողության մեջ։

1) Կոնֆերանսն արձանագրում է, վոր Հայաստանի արհշարժումը խոշոր նվաճումներ է կատարել 2 տարվա ընթացքում իր աշխատանքների բոլոր ասպարեզներում, մանավանդ բանվորության քանակի ավելացման և բանվոր դասակարգի նյութական մակարդակի բարելավման տեսակետից։

2) Կոնֆերանսը գտնում է, վոր համագումարը ճիշտ վորոշումներ է հանել առաջ քաշման, ապարատի բանվորականացման մասին և միանում է նրա բոլոր առաջարկներին այդ առթիվ։

3) Հավանություն տալով բնակարանային շինարարության և բաշխման ասպարեզում ՀԱՄԽ-ի վարած գծին, կոնֆերանսն անհրաժեշտ է գտնում հետագայում էլ ավելի ուժեղացնել նոր բնակարանների կառուցումը, հատկապես բանվորական վայրերում՝ բանվորության պահանջները բավարարելու նպատակով։

4) Կոնֆերանսը միանում է համագումարի հանած վորոշումներին գործազրկության դեմ պայքարելու, աշխատանքի պաշտպանության և սոցիալական ապահովագրության մասին.

5) Հետագայում ՀԱՄԽ-ը պետք է հատուկ ուշադրություն դարձնի կոոպերացիայի վրա, ուժեղացնելով այդպիսին և նրա ձեռքում կենտրոնացնելով բանվոր դասակարգի սպառողական պահանջի բավարարման գործը։

6) Արձանագրելով ՀԱՄԽ-ի ճիշտ ղեկավարությունը ուսկազմակերպությունների նկատմամբ Ուսկենտբյուրոյի միջոցով մի կողմից՝ և առանձին միությունների կենտավարչությունների ղեկավարության վոչ լրիվ բավարար լինելը արհկոմների նկատմամբ, մյուս կողմից՝ կոնֆերանսն անհրաժեշտ է գտնում, վոր հետագայում թե միութենական, թե միջմիութենական որգանները հատուկ ուշադրություն դարձնեն ուսարհմարմինների ղեկավարման գործին, իրենց կազմից մեկին հանձնարարելն այդ պարտականությունը և միաժամանակ հետաքրքրվեն ու զբաղվեն ուսարհմարմինների ակադեմ գործունեությամբ։

7) Կոնֆերանսն արձանագրում է, վոր միութենական և միջմիութենական մարմինները բավարար մասնակցություն չեն ցուցաբերել այնպիսի կոլեգիալ որգանների գործունեության մեջ, վորոնց մեջ մտնում են իրենց ներկայացուցիչները (ԱԼԳՎ կոլեգիա, թոշակային հանձնաժողովներ, ուսման վարձ սահմանող հանձնաժողովներ, բուհերն ընդունվող մանդատային կոմիսիաների և այլն)՝ և ՀԱՄԽ-ի ուշադրությունն է հրավիրում այդ խնդրի վրա։

8) Արձանագրելով, վոր աշխատավորության տնտեսական գրության բարձրացմանը զուգընթաց աճող կուլտ պահանջները չեն ունեցել անհրաժեշտ բավարարումն միությունների կողմից, շնորհիվ ակումբային շենքերի բացակայության և այլ պատճառների՝ անհրաժեշտ գտնել հետագայում միջոցներ ձեռք առնել ակումբային շենքերի շինարարության համար. կոնֆերանսը միաժամանակ պատ-

բաստակամություն է հայտնում ուսանողական ուժերը տրամադրել բանվոր դասակարգի կուլտուր-կրթական պահանջների բավարարման համար, վորպիսի նպատակով անհրաժեշտ է գտնում ուսանողությանը կապել արհմիությունական ակումբների հետ. մյուս կողմից՝ ընդգծելով ուսանողության մեջ տարվող կուլտուրական աշխատանքների թուլությունը (շենքի և միջոցների բացակայության պատճառով) կոնֆերանսը հարց է դնում ՀԱՄԽ-ի առաջ շտապ կերպով լուծելու ուսակումբի համար նոր շենք տրամադրելու հարցը։

9) Նկատի ունենալով, վոր բանֆակների բանվոր ուսանողները դժվարանում են 8-ժամյա բանվորական ոբից հետո արդյունավետ կերպով զբաղվել ակադեմիկ պարապմունքներով, անհրաժեշտ է առաջին հերթին բանֆակի բանվոր ուսանողների աշխատանքի որը դարձնել 7-ժամյա, իսկ վերջին կուրսերի համար՝ 6-ժամյա, վորպիսի հարցը հարուցում է կոնֆերանսը ՀԱՄԽ-ի առաջ։

10) Կոնֆերանսը հավատացած է, վոր համագումարի վորոշումները մեզ տանում են անշեղորեն դեպի նորանոր հաջողություններ սոցիալիստական շինարարության մեջ և վոր ՀԱՄԽ-ը ի վիճակի է այդ վորոշումները ճշտորեն կատարելու։

ԲԱՆԱՁԵՎ

Ընդունված է Պրոլետուսի Հայաստանյան 4-րդ կոնֆերանսի կողմից Պրոլետուս-կենտրոնի հաստատությանն առթիվ։

Պրոլետուսանողության Համահայաստանյան 4-րդ կոնֆերանսը լսելով ընկ. Գ. Պետրոսյանի զեկուցումը Պրոլետուսի կենտրոնի 26.27 ուսումնական տարվա գործունեության մասին՝ գտնում է, վոր նրա գիծն ուղիղ է,

տարած աշխատանքը՝ բավարար. հետագա գործունեության համար առաջարկում է հետևյալ բանաձևը.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

Մեր յերկրի տնտեսական, քաղաքական և կուլտուրական վերելքին զուգընթաց բարձրացել և բարձրանում է նաև Պրոլետուսանողության ընդհանուր տնտեսական, քաղ. և կուլտ. մակարդակը։ Պրոլետուսանողությունն աճում է թե վորակապես և թե քանակապես։ Վերջին տարիներս զգալիորեն մեծացել է մեր բուհերի բանֆակների և տեխնիկումների պրոլետարական կորիզը, վորը կազմվում է բանվոր և չքավոր գյուղացիության յերիտասարդությունից։ Գտնվելով հետզհետե բարեկեցվող տնտեսական–նյութական դրության մեջ՝ պրոլետարական ուսանողությունն ավելի և ավելի մեծ հնարավորություններ է ստանում նվիրվելու իր ակադեմիական հառաջդիմությանը և կուլտ.-կրթական մակարդակի բարձրացմանը, հետզհետե ավելի զգալի յե դառնում պրոլետարական ուսանողության մասնակցությունը խորհրդային շինարարության մեջ (նրա այլ և այլ բնագավառներում)։ Շնորհիվ նյութական-տնտեսական մակարդակի զգալի բարվոքման, բուհերի վարչ ակադեմիկ պարապմունքների և ուսկազմակերպությունների աշխատանքների ռացիոնալացման՝ Պրոլետարական ուսանողությունը հետագայում հնարավորություն ունի էլ ավել նվիրվածությամբ և արդյունավետ կերպով մասնակից լինելու խորհրդային շինարարությանը և զգալի դեր խաղալու մեր առաջ կանգնած կուլտուրական հեղափոխության դժվարին խնդիրը լուծելու գործում։

Նկատի ունենալով Պրոլետուսանողության դերն ու նշանակությունը մեր յերկրի շինարարության մեջ, նրա ղեկավարման ու դասակարգման կարևորությունը, անհրաժեշտ է էլ ավելի ուժեղացնել Պրոլետուսկենտրոյու-

բոյի գործունեությունը՝ նրան ղեկավարություն ցույց տալով ՀԱՄԿ-ի կուս. և խորհրդային մարմինների կողմից։

I ԿԱԶՄԱԿԵՐՊԶԱԿԱՆ ՄԱՍ.

1. Հաշվետու Տարում Պրոլետուսկենտբյուրոն հատուկ ուշադրություն է դարձրել տեխնիկումների և Կոնսերվատորիայի աշխատանքների, Տեխնիկումների կազմակերպությունների կազմակերպման, ղեկավարման, նոր տեխնիկումների ընդգրկման և այլ կազմակերպչական խնդիրների լուծմանը, սակայն և այնպես դեռ ևս արձանագրելի չէ զավառական տեխնիկումների կենդանի ղեկավարության վոչ բավարար լինելը։ Այս աշխատանքը պետք կազմի Կենտբյուրոյի հերթական խնդիրներից մեկը, նրա առորյա կազմակերպչական գործունեության մեջ։

2. Մինչև այժմ միութենական մարմինների կողմից հարկավոր ուշադրություն չի դարձված ուսարհկազմակերպություններին. միութենական որգանները հաճախ անհրաժեշտ ղեկավարություն չեն ցույց տալիս իրենց ուսբջիջներին. պետք է ուժեղացնել արհմիութենական ղեկավարությունն ուսմարմինների նկատմամբ, վորի համար անհրաժեշտ է, վոր յուրաքանչյուր միութենական մարմին - (կենտվարչություն, գավպրոֆբյուրո) իրեն կազմից մեկին հանձնարարի ուսանողական արհկազմակերպություններով զբաղվելու պարտականությունը։

2. Արձանագրելով, վոր հաշվետու տարում արհդեմոկրատիան լայնորեն կիրառվել է ուսկազմակերպությունների գործունեության ընթացքում, շեշտելի զանել այն հանգամանքը, վոր այնուամենայնիվ նկատված են վորոշ շեղումներ արհդեմոկրատիայի սկզբունքից. այդպիսի լերեվույթները հետագայում չպետք է տեղի ունենան ուսկազմակերպությունների պրակտիկայում և կենտբյուրոն պետք է հետևի, վոր բոլոր ուսարհմարմինները ամենայն ճշտու-

թյամբ կիրառեն արհեմակցական դեմոկրատիան իրենց ընթացիկ ամբողջ գործունեության մեջ։

4. Տեղերում արհսեկցիաներն ու ուսարհգործբյուրոները խոշոր աշխատանք են տարել արհմիութենական ագիտացիոնը վոչ միության անդամ ուսանողության վրա տարածելու գործում (վոչ արհանդամներին առաջ քաշելով այս կամ այն աշխատանքի համար, վորոշ հանձնարարություններ տալով այնպիսիներին և այլն)։ Հետագայում պետք է ել ավելի ուժեղացնել այդ գիծը, ինչպես և միության շարքերը ներգրավել այն ուսանողներին, վորոնք ՀԱՄԿՄ-ի վերջին վորոշմամբ կարող են լինել միության անդամ, ուժեղացնել այդպիսով արհանդամների կորիզը տվյալ ուսումնական հիմնարկում։ Միաժամանակ անհրաժեշտ է առանձնակի ուշադրություն դարձնել արհսեկցիայի անդամների, ինչպես և անկազմակերպ ուսանողության արհդաստիարակչության վրա։

5. Շնորհիվ վարչական և ուսանողական մարմինների ձեռք առած միջոցների և ընդունելությունների ճիշտ գծի, հնարավոր է յեղել բարվոքելու մեր բուհերի, բանֆակների և տեխնիկումների ուսանողության կազմը, այդպիսին պրոլետարականացման յենթարկելու ուղղությամբ։ Հետագայում անհրաժեշտ է անշեղորեն կիրառել բուհերի պրոլետարականացման գիծը և ամեն տեսակի միջոցներ ձեռք առնել, վորպեսզի բուհ մտած պրոլետուսանողը հնարավորություն ունենա մինչև վերջը շարունակելու իր ուսումը։

6 Չնայած արդեն տարիների աշխատանքին և փորձին, դեռևս նկատվում են չափազանց ծանրաբեռնվածության և մյուս կողմից՝ հասարակական աշխատանքների չբաշվածության դեպքեր, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է.

ա) Խիստ կարգավորման և ռացիոնալացման յեն-

թարկել ուսկազմակերպությունների և հասարակական աշխատանքները։

բ) Ըստ հնարավորության թեթևացնել ծանրաբեռնված ուսանողներին վորոշ աշխատանքներից, ղեկավարվելով շաբաթական 6 ժամ ծանրաբեռնման սկզբունքով.

գ) առաջ քաշել նոր ուսանողական ակտիվ և նրան հանձնարարել պատասխան աշխատանքներ. Առանձին ուշադրություն պետք է դասձնել հասարակական և արտաբուհական աշխատանքների վրա, այն իմաստով, վոր ուժերը բաշխվեն նպատակահարմար կերպով և ոգտագործվեն մաքսիմալ չափով, վորպեսի նպատակով անհրաժեշտ է արտաբուհական, հասարակական աշխատանքների համար ուժերի տրամադրումը կատարել միությունական գծով (կենտավարչության միջոցով)։

7. Արհկոմներին դպրոցի շինարարությանն ավելի խոշոր չափով մասնակից անելու նպատակով, համալսարանում վորպես փորձ լայնացված են Արհկոմների ֆունկցիաները և նրանց է հանձնված համապատասխան ֆակուլտետի ակադեմ ղեկավարությունը (ուսանողական գրծով), ակադեմ հանձնաժողովներին թողնելով միայն ընդհանուր ղեկավարությունը։ Քանի վոր այդ փորձերը շանսեր է ցույց տալիս իրեն արդարացնելու, անհրաժեշտ գտնել նույնի կիրառումը և ուրիշ դպրոցներում (հատկապես բազմաֆակուլտետ)։

8. Նկատի ունենալով, վոր վորոշ ուսմարմինների աշխատանքներին դպրոցական վարչությունների կողմից քիչ ուշադրություն է դարձված և հաճախ չեն լսված նրանց պահանջները դպրոցի ակադեմ կյանքի շինարարության այս կամ այն հարցի մասին և վոր ԱԼԳՎ այդ ուղղությամբ քիչ բան է արել և չի կատարել տեղերի բավարար հետազոտումն, անհրաժեշտ գտնել ԱԼԳՎ ի միջոցով առանձին հրահանգով պարզաբանել տեղական վարչություններին ուսկազմակերպությունների դերը դպրոցական շինարարության մեջ և նրանց ու վարչական մարմինների փոխհարաբերությունները։ Միաժամանակ ԱԼԳՎ գծով տեղերին հրահանգել ուսզործբուրոների ծախսերի բավարարման և նախահաշվային կարգով ուսանողական ծախսերը դպրոցի նախահաշվի մեջ մտցնելու մասին, ինչպես և դպրոցի նախահաշիվը կազմելու աշխատանքներին ուսանողությանը մասնակից անելու մասին։

9, Չնայած վոր հաշվետու տարում կազմված է ԱԼԳՎ մշտական կոլլեգիան և կենտբյուրոն նրա մեջ իր վճռական ձայնով ներկայացուցիչ ունի, սակայն կոլլեգիայի նիստերը լինում են շատ հազվադեպ, (հաճախ շնորհիվ այն հանգամանքի, վոր ներկայացուցիչ անդամները չեն գալիս), վորի հետևանքով նա կորցնում է իր նշանակությունը։ Անհրաժեշտ է հետագայում ԱԼԳՎ ի կոլլեգիալ նիստերը հրավիրել պարբերակի և ենթության առնել բոլոր կարևոր հարցերը, ինչպես և ՀԱՄՍ ի միջոցով լուծել կոլլեգիայի նիստերին բոլոր ներկայացուցիչներ ին մասնակից անելու հարցը։

10. Մինչև այժմ էլ կաղում է հաշվառման, հաշվետվության, ինֆորմացիայի գործը, շնորհիվ այն հանգամանքի, վոր տեղերը չափազանց զանազան են արձագանքում կենտբյուրոյի գրություններին, ուշ են պատասխանում կամ բոլորովին չեն պատասխանում նրա հարցումներին. առաջիկայում պետք է խստորեն հետևել, վոր տեղական ուսմարմինները ճկուն լինեն և ճշտորեն ու ժամանակին պատասխանեն կենտբյուրոյի հարցումներին։

11 Կենտբյուրոյի հանձնաժողովները իրենց չեն արդարացրել և նրանց աշխատանքները տարվել են կենտբյուրոյի ապարատի ու նիստերի միջոցով, վորն ունեցել է բացասական ազդեցություն վերջինիս աշխատանքների վրա։ Առաջիկայում անհրաժեշտ է ուժեղ և գործուն կազմեր առաջադրել հանձնաժողովների համար և աշխատանքները տանել նրանց միջոցով (ուսխապարատական կարգով)։

13. Հաշվետու տարում հաջողվել է տեղական վորոշ ուսմարմիններին ազատված աշխատողներ ունենալը (ինչպես Համալսարան, Կոնսերվատորիա և Բանֆակ), սակայն պետք է 28/29 ակ. տարում նախահաշվային կարգով լուծել բոլոր խոշոր միավորների գործբյուրոների ազատված նախագահ և քարտուղար ունենալու և խոշոր Արհկոմների ազատված աշխատող ունենալու հարցը.

13. Կենտբյուրոյի կապը Վրաստանի և Ադրբեջանի կենտբյուրոների հետ, վորը սահմանված եր անցյալ տարի, դեռևս չի գուրս յեկել արձանագրությունների փոխանակման շրջանակից, չնայած, վոր այդ ել յեղել է բավական արդյունավետ։ Պետք է աշխատել հետագայում ավելի խորացնել ու աշխուժացնել այդ կապը, կազմակերպելով կենդանի կապ եքսկուրսիաներ, գործուղումներ և այլն և այդպիսով մերձեցնել մեզ այդ յերկու մարմինների աշխատանքները։

Վերատուգիչ հանձնաժողովները մինչև այժմ չեն ընդունել իրենց ֆունկցիաները (շնորհիվ առանձին կանոնադրության բացակայության և ոլինակելի կանոնադրություն չունենալու) թույլ են տվել հաճախ սխալներ, վորպիսիները հետագայում չկրկնվելու համար հաճախակի հրավիրել վերատուգիչ հանձնաժողովների խորհրդակցություններ, պարզաբանելով նրանց գործունեության հետ կապված վորոշ խնդիրներ։

15. Մի ժամանակ անհրաժեշտ է, վոր բոլոր ուսմարմիններն իրենց աշխատանքների ընթացքում ուշադրության առնեն նաև ուսանողական դիսցիպլինայի հարցը։

2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

Պրոլետարական պետությունը խոշոր միջոցներ է ծախսում, ինչպես դպրոցական շինարարության, այնպես ել պրոլետարական ուսանողության տնտեսական

դրության բարելավման վրա այդ տեսակետից մենք նկատում ենք խոշոր նվաճումներ, ինչպես որինակ բուհերի կարգավորման—սարքավորման բարելավումը, դասատուների վարձատրության տարի տարի բարձրացումը, թոշակների հավելումը և այլն, սակայն այդ նվաճումների հետ մենք նկատում ենք և վորոշ բացեր.—

1. Պետական թոշակը, չնայած վոր քանակով շարունակ ավելանում է, այնուամենայնիվ չի բավարարում հետզհետե բուհերն յեկող բանվորա-գյուղացիական յերիտասարդության պահանջին և թոշակառուների տոկոսը դեռևս անբավարար է համեմատած ՌՍՖՍՀ-ի և այլ հանրապետությունների հետ։ Անհրաժեշտ է առաջիկա 2–3 տարում թոշակառուների տոկոսը հասցնել 25-ից 30-ի և չափը 30 ռուբ., վորով աշխատավորության ծոցից դուրս յեկած յերիտասարդությունը հնարավորություն կունենա մինչև վերջ շարունակվելու բարձրագույն կրթությունը։

2. Մեզ մոտ մինչև այժմ քիչ ուշադրություն է դարձված Ուկբահի (ուսանողության կենցաղը բարելավող հանձնաժողով) վրա և ինքը Ուկբահը չի ցուցաբերել առանձին աշխուժություն և յեռանդ, վորի շնորհիվ արտասական մի շարք կարևոր ձեռնարկումներ չեն կատարվել։ Հետագայում անհրաժեշտ է պրոլետարական լայն մասսաների և խորհրդային կուսակցական, արհեստակցական մարմինների ամենալայն ուշադրությունը հրավիրել Ուկբահի վրա, դարձնելով այն պրոլետարական մակարդակի բարձրացման կարևորագույն որգանը և հետևել, վոր տեղերը ակտիվ մասնակցություն ցուցաբերեն Ուկբահի գործունեության ընթացքում, ամենուրեք և ընդառաջեն նրան իրենց ինքնագործունեության և այլ միջոցներով։

3. Բնակարանային սուղ ճգնաժամն անդրադառնում է նա և պրոլետուսանողության վրա, վորը բնակարաններ-

ի մեծ կարիք է զգում։ Հանրակացարանների բնակելի տարածությունն աճում է վոչ համաչափ պրոլետուսի պահանջին. անհրաժեշտ է մոտագայում հարցը բարձրացնել հանրակացարանի համար անհրաժեշտ նոր շենքեր տրամադրելու համար։

4. Արձանագրելով, վոր Ուսկոմն իրեն արդարացրել է և պրոլետուսանողության լայն զանգվածներին հնարավորություն է տվել խոշոր գեղջով և յերկար վարկով ձեռք բերել գրենական և ուսումնական պարագաներ՝ անհրաժեշտ է հատապատասխան մարմինների միջոցով Ուսկոմի համար ձեռք բերել յերկարատև վարկ, վորպեսզի նա կարողանա իր աշխատանքները եվ ավելի լայնացնել և բավարարել ամբողջ ուսանողության պահանջին։

5. Արհմիությունների կենտվարչությունները մինչև այժմ բավարար ուշադրություն չեն դարձրել միության անդամ գործազուրկ ուսանողներին նյութական ոգնություն ցուցցատալու խնդրին. պետք է առաջիկայում միությունների գործազուրկ այլ անդամների հետ հատավասար կերպով ոգնությունը տարածել նաև ուսանողների վրա։

6 Ընդունած, վոր ուսանողական աշխատանքային արտելները խոշոր դեր ունեն կատարելու ուսանողության գործազրկությունը թեթևացնելու տեսակետից, այդպիսիների կազմակերպումը միշտ հետաձգվում է ֆինանսական միջոցների և շենքի բացակայության պատճառով։ Արտելների շատ կազմակերպումն Աշխբորսայի միջոցով պետք է կենտբյուրոյի հերթական խնդիրը դարձնել։

7. Ուսանողությունը հնարավորություն չունի բավարարելու իր կուլտ կրթական պահանջները (թատրոնի, կինոյի և այլն)՝ հարց բարձրացնել ՀԱՄԽ-ի միջոցով, վոր ամեն որ թատրոնի և կինոյի զեղչված տոմսեր տրամադրվեն ուսանողության համար, ինչպես այդ արվում է մեր հարևան խորհրդային հանրապետություններում։

8. Ուսանողության փոխադարձ ոգնությունը կազ-

մակերպելու գործում խոշոր դեր ունեն կատարելու ՓՈԴ-երը. յելնելով այդ դրությունից մի քանի տեղերում կազմակերպված են ՓՈԴ-եր. արհրաժեշտ գտնել հետագայում նրանց ցանցի ընդլայնումը։

9. Ուսանողության սննդի գործը դեռևս կանոնավորված չի. անհրաժեշտ է առանձնակի ուշադրություն դարձնել ուսճաշարանի վրա՝ ձեռք բերելով նրա համար արհ. և Խորհ. մարմինների կողմից համապատասխան դոտացիա։

10. Նկատի ունենալով, վոր յերկաթուղային արտոնատոմսերի (լիտերների) քանակն առանց այն ել չի բավարարում պահանջին՝ հեռևել, վոր այդպիսիների քանակը չկրճատվի, իսկ բաշխումը կատարվի ամենայն նպատակահարմարությամբ.

11 Անհրաժեշտ է հետագայում ընդլայնել ուսանողության տրվող կոմունալ արտոնությունները (բաղնիքի ջրի, լույսի և այլն)։

12. Արձանագրելով կուրորտ-սանատորական և հանգստի տների տեղերի քանակի աճումն անցյալ տարիների նկատմամբ՝ հետագայում ավելի շատ տեղեր ձեռք բերել ուսանողների համար թե Սոցապգանձարկղի գծով և թե դպրոցների գծով՝ մտցնելով համապատասխան կետ նախահաշվի մեջ։

3. ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՄԱՍ

1. Արձանագրելով, վոր ուսանողության մեջ կուլտուր-կրթական աշխատանքները ծավալելու և նրա կուլտուրական պահանջը բավարարելու համար անհրաժեշտ նյութական միջոցների, ինչպես և շենքի բացակայության հեռևանքով զգալի թուլություն է նկատվում աշխատանքների այդ բնագավառում՝

գտնել վորպես անհետաձգելի անհրաժեշտություն, վոր հետագայում կենտվարչությունը յուրաքանչյուր անդա-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՌ-Ական ՍՍՀ
16885 38/40-62

մի կուլտ ծախսերի համար արհկոմներին բաց թողնի նախահաշվային կարգով անհրաժեշտ գումար. ուսանողական ակումբի համար տրամադրվի համապատասխան շենք, իսկ մինչև այդ ուսանողական կուլտ-աշխատանքները տանել միութենական ակումբներում։

2. Նկատի ունենալով, որ յերկրի պաշտպանության գործում խոշոր դեր են խաղում ռազմականացման աշխատանքները, աշխատել հետագայում ուժեղացնել այդ պիսիները՝ պրոլետուսի լայնագույն մասսաներին ներգրավելով ՊԱՋ-ԱՎԻՈՔԻՄԻ և ռազմական խմբակների մեջ. միաժամանակ կազմակերպել նաև հրաձգային խմբակներ։

3. Պրոլետուսանողության մեջ նկատված մասնակի կենցաղային խեղաթյուրումների, հիասթափության և այլ բացասական յերեույթների դեմ պայքարելու համար զարկ տալ զվարճալիքի, խելացի հանգստի, ակումբային և կարմիր անկյան աշխատանքներին, միջազգային քաղ. դասախարակչական աշխատանքներին. դնել հեռանկարային ու այլ զեկուցումներ։

4. Մինչև այժմ պրոլետուսանողությունը, որպես աշխատավորության կուլտուրական մաս լիակատար կերպով չի ոգտագործված աշխատավորական լայն մասսաների կուլտուրական կարիքներին սպասարկելու համար։ Անհրաժշտ գտնել հետագայում ուսանողների արտաբուհական գծով ոգտագործումը կատարել կենտվարչությունների և արհկոմների միջոցով՝ ուսանողին կապելով իր մասնագիտության համապատասխանող արտադրական հիմնարկի կուլտուր-հասարակական աշխատանքներին՝ կենտվարչության անմիջական ղեկավարության տակ. միաժամանակ ուսանողներին մասնակից անել կազմակերպվող պրոֆկուրսերին։

5. Արձանագրելով, որ ուսանողական արհմբակներին հաճախ կինով ըշությունները չեն տալիս ղեկավարներ, հետագայում հետևել, որ նման յերևույթներ չլինեն, միաժամանակ կուրս վերցնել ուսանողների միջից համապատասխան խմբակների ղեկավարներ առաջքաշելու։

6. Մինչև այժմ կուլտ հանձնաժողովի ղեկավարությամբ գործող խմբակները ամփոփված են յեղել իրենց շրջանակում. հետագայում աշխատել ուժեղացնել նրանց գործունեությունը, դուրս բերելով խմբակի շրջանակից և կապելով հասարակական աշխատանքի հետ։

7. Ֆիզկուլտ աշխատանքները մինչև այժմ մեր բոլոր տեղերում կաղում են և նրանց վրա չի դարձվում հարկավոր ուշադրություն. անհրաժեշտ է ամենամեծ ուշադրությունը դարձնել այդ աշխատանքների վրա, ինչպես և ֆիզկուլտի համար անհրաժեշտ պարագաների գնման վրա, ֆիզկուլտ աշխատանքները տանել միութենական ֆիզկուլտ դահլիճներում։

8. Առաջիկայում անհրաժեշտ է լուրջ քննության առնել ուսթղթակիցների և պատի թերթերի հարցն այն իմաստով, որ ուսթղթակցական շարժումը միանա ընդհանուր թղթակցական շարժմանը և նրա բյուրոյից ստանա անհրաժեշտ ղեկավարություն։ Պետք է հրավիրել ուսթղթակիցների պարբերական խորհրդակցություններ, ժողովներ, աշխատել վոր նրանք ուսանողական կյանքից գրեն խորհրդային մամուլում, ինչպես և կապվեն «Կարմիր Ուսանողություն» հանդեսի հետ։

9. Ուսանողների կինոյի պահանջը բավարարելու համար պարբերաբար վարձով վերցնել կինո թատրոնները, ինչպես և ոգտագործել ՀԱՄԽ-ի շրջիկ կինոն։

10. Առանձին ուշադրություն դարձնել խորհրդային մամուլը և «Կարմիր Ուսանողությունը» Հայաստանի բուհերի ուսանողության մեջ տարածելու գործում։

4. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՄԱՍ

Արձանագրելով, որ պրոլետուսանողության ակադեմիկ հառաջադիմությունը և վարակի մակարդակը հետզհետե բարձրանում է շնորհիվ նրա տնտեսական դրության բարվոքման, բուհերի ակադեմ կյանքի կարգավորման, կահավորման, դասախոսների կադրերի բարելավման և այլ հանգամանքների՝ անհրաժեշտ դանել հետագայում բուհերի ակադեմ կյանքի ռացիոնալացման, ուսումնառժանդակ հիմնարկների հարստացման, դասավանդական կազմի բարելավման, բուհական ձեռնարկների հրատարակման և այլի աշխատանքների խորացումն ու լայնացումը։

2. Նկատի ունենալով, որ մեր տնտեսության այլև այլ բնագավառներում արդեն աշխատում են նոր շրջանավարտներ, դուրս յեկած մեր բուհերից՝ անհրաժեշտ դանել կապի ստեղծումը նրանց հետ նպատակ ունենալով մի կողմից պարզել մեր դպրոցների տված պաշարի և պատրաստականության համապատասխանության տոկոսը արտադրության պահանջներին և մյուս կողմից՝ ոգնել նորավարտ մասնագետներին իրենց աշխատանքների ընթացքում, միաժամանակ ուսմարմինները պետք է խոշոր մասնակցություն ունենան մեր շրջանավարտներին գործի դնելու, ինչպես և դանազան ինստիտուտներ գործուղելու խնդիրների լուծման ժամանակ։ Հիմնարկների միջոցով պարզել, թե մեր նոր շրջանավարտների վարակավորումը վորքան է համապատասխանում նրանց պահանջներին։

3. Արձանագրելով պրակտիկայի ասպարեզում մինչև որս գոյություն ունեցող թերությունները՝ գործնական աշխատանքների անկազմակերպ բնույթը, տեղերի աննպատակահարմար ոգտագործումը, պրակտիկայի ուղարկելու սխեմի բարդությունը և աշխատանքների վոչ հաճախված լինելը, ինչպես և մի շարք բացեր այդ ասպարեզում՝ միջոցներ ձեռք առնել կանոնավորելու պրակտիկայի աշխատանքները։

4. Ընդգծելով, որ մինչև այժմս չի կանոնավորված յեվրոպական լեզուների դասավանդումը համալսարանում և տեխնիկումներում՝ հետևել այդ խնդրի կարգավորմանը միաժամանակ խոշոր ուշադրություն դարձնել ռուսերենի դասավանդմանը բոլոր դպրոցներում։

5. Առարկայական հանձնաժողովները հաշվեառ տարում զգալի մասնակցություն են ցուցաբերել բուհի ակադեմ շինարարության մեջ. անհրաժեշտ է հետագայում ամենալուրջ ուշադրություն դարձնել նրանց աշխատանքների վրա։

6. Արձանագրելով, որ բուհերի ծրագրերի մեջ ռազմական առարկաների մուծումը դանդաղ է ընթանում, հետևել այդ ընթացքի արագացմանը։

7. Նկատի ունենալով, որ համալսարանում և մի քանի այլ դպրոցներում ուսումնական ծրագրերը շատ ընդարձակ են և վոչ այնքան կարևոր առարկաներ դեռ ևս ավանդվում են՝ ԱԼԳՎ ի միջոցով հարց հարուցել համապատասխան ֆակուլտետների ծրագրերը կրճատելու և Մոսկվայի ծրագրերին հարմարեցնելու համար։

ԲԱՆԱՁԵՎ

Հայաստանի Հանրապետական պրոլետուսանողության 4-րդ կոնֆերանսը լսելով ընկ. Խոջամիրյանի զեկուցումը Լուսժողկոմատի 26/27 ամբողջ և 27/28 կեսում տարված աշխատանքների մասին, հավանություն է տալիս դրանց, արձանագրելով ձեռք բերած հետևյալ նվաճումները՝

1) Շնորհիվ Լուսժողկոմատի կողմից հիշյալ ժամանակաշրջանում կատարած արդյունավետ աշխատաքների՝ զգալի կերպով բարձրացել են արհլուսպլխվարական ցանցին յենթակա ուսումնական հիմնարկների աշխատանքները, մի

շարք ԲՈՒՀ-ը կազմակերպչորեն ձևավորվել են. հնարավորություն է ստեղծվել հիմք դնելու նորմալ հարաբերությունների՝ մի կողմից նման ուսումնական հիմնարկների, մյուս կողմից՝ Գերատեսչական շահագրգռված հիմնարկների միջև։ Շնորհիվ նրան, որ ժամանակին բուհերի կազմավորման խնդիրը մասամբ լուծվել է (որինակ՝ Ինդուստրիալ Տեխնիկումը, Բանֆակը, Մանֆակը, Կոոպ. Տեխնիկումը, Գյուղ. Տեխնիկումը և այլն) բարձրացել է հիշյալ բուհերի որակը։ Հիմնականում ճիշտ է լեղել Լուսժողկոմատի սոցիալական կազմի կարգավորման ասպարեզում անցկացրված գիծը, որը տվել է նշմարելի արդյունքներ. ակներև նվաճում լեղել է նաև ուսանողության դրության բարելավման ասպարեզում. (հանրակացարանների կառուցումը, թոշակառուների թվի ավելացումը և այլն). աշխուժացել են առարկայական հանձնաժողովները, որոնք սկսել են քննության յենթարկել ուսանողության հետաքրքրող ակադեմիական խնդիրները։ Վերոհիշյալ նվաճումների հետ միատեղ կոնֆերանսն արձանագրում է մի շարք թերություններ և բացեր. որոնք են՝ թոշակների դեռևս անբավարար չափն ու քանակը. բնակարանային—հանրակացարանային շինարարության դանդաղությունը և բնակելի տարածության սակավությունը, դպրոցների դեռևս վոչ լրիվ կարգավորումն ու սարքավորումը. ԱԼԳՎ-ի ապարատի անբավարար լինելը, որի շնորհիվ կաղացել է տեղերի ղեկավարման, հետազոտման աշխատանքները, ԱԼԳՎ-ի կոլեգիան նիստերի սակավ հրավիրումը և այլն։

Կոնֆերենցիան արձանագրելով այս բոլորը՝ առաջարկում է ապագայում կյանքում կիրառելու հետևյալը.

1) Անհրաժեշտ է լրացնել բուհերում զգացվող համապատասխան դասախոսների ու դասատուների նկատվող բացը, միաժամանակ յեղած անհամապատասխաններին փոխարինել նորերով.

2) Նկատի ունենալով, որ մեր բուհերի ակադեմիական աշխատանքների որակը շատ սերտ կերպով կապված է դասավանդման մեթոդների հետ, առաջարկվում է հիմք ունենալ ռեկտորական խորհրդակցության որոշումները, աշխատել ուր որ հնարավոր է, անպայման անցնել դասավանդման ռացիոնալ և նպատակահարմար ձևերին, միաժամանակ աչքաթող չանելով խնդրի ծանրակշռությունը՝ դնելով այն համապատասխան խորհրդակցություններում և մարմիններում ի քննություն։

3) Յելնելով նրանից, որ ներկա մեր պետական քննությունների ձևը չի ապահովում որակապես բարձր մասնագետներ պատրաստելու խնդրում, առաջարկել քննությունների դիսսերտացիոն ձևի հարցը շուտափութ կերպով քննության առնել և լուծել այն։

4) Առաջիկայում մեր բուհերի և առանձին ֆակուլտետների ուսումնական պլանները կազմելիս գիծ ընդունել ապագա մասնագիտության բնորոշումը, միաժամանակ վերոհիշյալ պլանները համաձայնեցնել համապատասխան շահագրգռված հիմնարկների հետ՝ բղխեցնելով այդ մեր իրական պահանջներից։

5) Նախատեսված ուսումնական ծրագրերը լրիվ կերպով կիրառելու համար աշնանը պարապմունքներն սկսել սեպտեմբերի 15-ից վոչ ուշ.

6) Բուհերի և նրանց ներքին ակադեմ և այլ կազմակերպությունների աշխատանքների պլանավորությունն ապահովելու համար անհրաժեշտ է դրանց վերընարությունները կատարել ուսումնական տարվա սկզբին (ֆակուլտետի, խորհրդի, դեկանատի, առարկայական հանձնաժողովների և այլն).

7) Շտապ կերպով քննության նյութ դարձնել Տեխֆակի և Սոցֆակի հեռանկարների խնդիրը, նրանց մասնագիտական դեմքը պարզելու համար.

8) Ուսանողությանը տեսականին զուգընթաց գործնական աշխատանքների հետ կապելու և այդ ասպա-

բեգում խորացնելու նպատակով, առավել օգնություն ցուցանել հետագայում բուհերի կից գործնական աշխատանքների համար լաբորատորիաների, արհեստանոցների և ինստիտուտների կազմակերպմանը:

9) Վերջնականապես լուծել ՀՊՀ Գյուղֆակի տնտեսության խնդիրը դրական իմաստով:

10) Համապատասխան հիմնարկների առաջ հարց հարուցել կարճելու Բանֆակներ հաճախող բանվոր ուսանողների աշխատաժամը, իսկ վերջին կուրսի ուսանողների համար կիրառելու 6 ժամյա աշխատանքը:

11) Սոցիալական կազմի կարգավորման տեսակետից նպատակահարմար գտնել հնարավոր դեպքում անցկացնել զտում՝ կապելով այն, միաժամանակ ակադեմիական զտման հետ, խստացնել նաև հետագա ընդունելությունը,

12) Թվելով պրակտիկայի ասպարեզում անցյալում ունեցած բացերը՝ նախապատրաստական աշխատանքի բացակայումը, տեղերի աննպատակահարմար բաշխումը, ղեկավարության բացակայումն է և այլն, անհրաժեշտ է.

ա) Մինչև մարտ ամսվա վերջը վերջացնել բոլոր նախապատրաստական աշխատանքները և տեղերի բաշխումը ըստ տեղերի և ֆակուլտետների.

բ) Համալսարանի և այլ բուհերին կից պրակտիկան ղեկավարելու համար ունենալ համապատասխան հանձնաժողովներ:

գ) Աշխատել ավելի մեծ քանակությամբ տեղեր ձեռք բերել Հայաստանի սահմաններից դուրս:

դ) Գործնականի համար տեղեր հատկացնել նաև այն ֆակուլտետներին և բուհերին, վորոնց մինչև օրս չի տված. առաջիկայում ստեղծել մանկավարժական պրակտիկա Մանֆակի և Տեխնիկումների ուսանողության համար. պարզել Գեղարդտեխնիկումի գործնական աշխատանքների, շրջանավարտների տեղավորման խնդիրը:

13) Հրահանգել Համալսարանի վարչությանը և մյուս

բուհերին Գիտ. աշխատակիցներ և լաբորանտներ առաջ քաշելիս ելակետ ունենալ նաև սոցիալական դրությունը, միաժամանակ նմաններ առաջ քաշել նաև մյուս ֆակուլտետներից (Սոցֆակ և այլն):

14) Ամեն կերպ օժանդակել (նյութական և այլ միջոցներով) բուհերի ավարտական կուրսերի կողմից կազմակերպվող էքսկուրսիաներին (Գիտական և ակադեմիական նպատակներով):

15) Առաջիկայում ուսկազմակերպությունների ծախքերը անհրաժեշտ է անցկացնել բյուջետային կարգով, խնդրի քննությանը մասնակից անելով ուսներկայացուցիչներին:

16) Հատուկ ուշադրություն դարձնել ռազմագիտության և Ֆիզկուլտ աշխատանքների վրա, մտցնելով դրանք ուսծրագրերի մեջ: Միաժամանակ լուծումն տալ ֆիզկուլտ ստադիոնների և ձմեռային շենքերի խնդրին:

17) Չբավականանալ թոշակների քանակի կատարած ավելացումով, առաջարկել Լուսժողկոմատին առաջիկա 2-3 տարում բարձրացնել թոշակը մինչև 30 ռ., իսկ թոշակների թիվը հասցնել ուսանողության ընդհանուր թվի 25-30%-ին: Լուսժողկոմատի 5-ամյա պլանի մեջ մտցնել թոշակառուների թիվը Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. տոկոսին հասցնելու:

18) Նկատի ունենալով Լենինականի Բանֆակի աշխատանքների ծավալումը, անհրաժեշտ է ունենալ Ուսգործբյուրոյում ազատ աշխատակից:

19) Կանոնավորել ուսանողական բնակարանային խնդիրը, ձեռք բերելով անհրաժեշտ բնակելի տարածություն.

20) Շտապ կերպով լուծել Կոնսերվատորիայի կանոնադրության մշակման հարցը, պարզել թեորետիկ դասարանի խնդիրը և ավելացնել կարևոր առարկաները, հրավիրելով նոր ուժեր:

21) Ուսանողության առողջապահական դրությունը պարզելու համար աժմյանից պետք է Լուսժողկոմատը ձեռնարկի ուսանողության բժշկական քննությանը և հետագայում էլ պարբերաբար կատարի բժշկական քննություններ։

22) Հարվածային կարգով դնել մեր բուհերի համար համապատասխան շենքերի կառուցման կամ պատրաստի շենքերի ձեռք բերման խնդիրը, նկատի ունենալով, որ յեղածները չեն բավարարում մեր մինիմալ պահանջներին։

23) Ցելնելով այն տեսակետից, որ Արհլուսգլխվարչության ներկա ապարատը ֆիզիկապես ի վիճակի չէ բավարար ղեկավարելու բուհերի ակադեմիական կյանքը, հարց դնել լայնացնելու ապարատը, ունենալով պրակտիկա ղեկավարելու համար առանձին հրահանգիչ։

24) Մեր բուհերի վորակի բարձրացման հետ մեծ կապ ունի նաև Սոցդաստվարական և 7-ամյա դպրոցների ավարտական կադրերի վորակը, նկատի ունենալով, որ վերջինների վորակը բավականին ցածր է, միջոցներ ձեռք առնել բարձրացնելու հիշյալ դպրոցների ակադեմ աշխատանքները և համաձայնեցնելու բոլոր տիպի դպրոցների ծրագրերը իրար հետ։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ—Арм ССР
им. А. Мяс...

ՊՐՈԼԵՏՈՒՍԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ 4-ՐԴ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԸՆՏՐԱԾ ՊՐՈԼԵՏՈՒՍԿԵՆՏԲՅՈՒՐՈՅԻ ԿԱԶՄԸ

1. **Պետրոսյան Գարեգին**	նախագահ և ԱԼԳՎ ներկայացուցիչ.
2. **Սեվակ Գուրգեն**	Պատքարտուղար և կուլտհանձնաժողովի նախագահ.
3. Առաքելյան կամսար	Ակադեմ հանձնաժողովի նախագահ և Թոշ. Կենտ. Հանձնաժողովի ներկայացուցիչ.

4. Խոլոբիկյան Հրաչյա	(Համալսարան)	Անդամներ
5. Սիմոնյան Խիկար	(Ցերբանֆակ)	
6. Կուծանյան Վարդկես	»	
7. Գրիգորյան Հովհաննես	(Կոնսերվատ.)	
8. Աբրահամյան Մկրտիչ	(Ինդ. տեխն.)	
9. Գրիգորյան Ավո	(Լենբանֆ.)	
10. Թերզիբաշյան Վահագ	(Գեղ. տեխն.)	
11. Գասպարյան Սուրեն	(Մանկ. տեխն.	

1. Գյուրջյան Սմբատ	(Համալսարան)	Թեկնածուներ
2. Ադոյան	(Բանֆակ)	
3. Քրիշյան Մինաս	(Կոնսերվատ.)	
4. Օհանյան Արմենակ	(Լենբանֆ.)	

«Ազգային գրադարան»
NL0203066

0
1
2